

Աղա տի Մաթուսի վրայ մնացած էր  
 եկեղեցւոյ շինութեան բովանդակ ծախքը, թէ-  
 պէտ եւ տեղւոյն ազգայինք ստորագրութիւն  
 տուած էին մէկ մասը վճարելու, սակայն կը  
 զընային այժմ վճարել անոր փեսայ Ասլան  
 Յակոբին, որ ջուղայէն յատկապէս Լիվոնոյ  
 եկած էր:

Վերջապէս Ասլան՝ Յովակիմ Արքեպիսկո-  
 պոսի ձեռօք Ս. Քահանայապետին դիմում ըրած  
 էր, եւ Յովակիմ Արքեպս. Փետր. 2, նամակին  
 մէջ կը ծանուցանէ՝ թէ այս խնդրոյն համար  
 Ս. Քահանայապետին ներկայացած է, կարգա-  
 դրութիւն խնդրած եւ կը յուսայ մէկ ամէն  
 հրամանը հանել, ինչպէս ալ յետոյ Ս. Քահա-  
 նայապետին հրամանաւ Լիվոնոյի Լատին Եպս. ը  
 նոյն գործը կարգադրած է: Սոյն Ասլան Յակոբ,  
 որդի կարապետի, յետոյ Հռոմ բնակած է եւ  
 հոն գրած է իւր կտակը 3 Յունիս 1722ին,  
 որուն կը ստորագրեն իբրեւ վկայ՝ այն ժամա-  
 նակ Հռոմ գտնուող հայ կաթողիկէ եկեղեցա-  
 կաններէն «Վրդանէս Եպս. կեսարացի, Բա-  
 բերթցի Ստեփան Վ. Խոստովանահայր Հայոց  
 եկեղեցին Սրբուհւոյն Մարիամու Եգիպտացւոյ  
 (կնքոյն թուականն է ՌՃԽԲ [= 1693]), Տէր  
 Պետրոս Յամթեցի քահանայ (որուն կնքոյն վրայ  
 կայ  $\frac{\text{Ո|Պ}}{\text{Վ|Ա}}$ , միայն Մխիթարեանց յատուկ = Որ-  
 դեգիր կուսի վարդապետ Ապաշխարութեան),  
 Տէր Մարգար Յամթեցի, եղբայր Մարտիրոսի  
 Եպիսկոպոսին Մէրտինու որ ի նոյնոյ Եպիսկո-  
 պոսէ էի առաքեալ ի մեծն Հռոմ, Տէր Մար-